
**ՀՈՈՄԻ ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ***

Հռոմի Քահանայապետական Լեոնյան հայ վարժարանի նախկին մեծավոր գերապայծառ Վարդան Պողոսյանի նախաձեռնությամբ 2000 թ. վերջերին սկիզբը դրվեց վարժարանի գրադարանի դասակարգման և արժեքավորման ծրագրին: Այդ ծրագրին, որ նպատակ ունի գրադարանի դռները բացել հասարակության առաջ, մասնակցում են դրսից հրավիրված մի քանի մասնագետներ, որոնք աշխատում են նպաստել գրադարանի ձեռագրերի, արխիվային թղթերի և հին տպագրված գրքերի պահպանությանն ու ուսումնասիրությանը: Ձեռագրերի բաժինը, որով էս զբաղվում եմ, համակցված է Բոլոնիայի համալսարանի արդեն գործող նախագծի հետ: Այն սկսվել է 1996 թ. Գաբրիելա Ուլուիոջյանի ղեկավարմամբ: Բոլոնիայի համալսարանի այս նախագիծը նպատակ ունի պատրաստելու Իտալիայի գրադարաններում գտնվող հայերեն ձեռագրերի ցուցակը՝ բացառելով Ս. Ղազարի Մխիթարյան մատենադարանի և Վատիկանի գրադարանի արդեն իսկ գիտական ցուցակներով օժտված երկու մեծ հավաքածուները: Հռոմի հայ վարժարանի գրադարանում այս աշխատանքի առաջին արդյունքները էս արդեն ներկայացրել եմ անցյալ տարվա հոկտեմբերի 10-12-ին Գերմանիայի Վյուրցբուրգ քաղաքում տեղի ունեցած Հայկական ուսումներու միջազգային ընկերակցության (*Association Internationale des Etudes Arméniennes*) ընդհանուր IX ժողովում¹: Այս առիթով ուզում եմ հակիրճ ներկայացնել այն՝ ավելացնելով այս վերջին ամիսների ընթացքում ձեռք բերված նոր նյութերը:

Հայտնի է, որ գոյություն ունի Լեոնյան հայ վարժարանի ձեռագրերի մխիթարյան վարդապետ Ներսես Ակինյանի կազմած ցուցակը: Այս ցուցակը 1935-36 թթ. Հռոմ կատարած նրա այցելության արդյունքն է: Ն. Ակինյանի այդ աշխատանքը² 1961 թվին լույս տեսավ Վիեննայի Մխիթարյան միաբանության հրատարակված Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց շարքի տասնմեկերորդ հատորով³: Ակինյանի ցուցակը ընդգրկում է Լեոնյան վարժարանի 46 ձեռագրերի և իր Հռոմում գտնված ժամանակաշրջանում Հռոմի հայ Ս. Վլաս եկեղեցուն կից հյուրանոցում (*via Giulia* փողոցի վրա) պահպանված 67 ձեռագրերի նկարագրությունը: 1950-ական թթ. ավելի լավ պահպանման պայմաններ գտնելու նպատակով Ս. Վլասի մատյանները տեղափոխվեցին վարժարան, որտեղ գտնվում են մինչ օրս: Այսպիսով, Լեոնյան հայ վարժարանում այսօր կա Ն. Ակինյանի

*Ձեկուցում «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները» Հայագիտական միջազգային համաժողովում (2003 թ. սեպտեմբեր 15-20):

¹ Այս արդյունքները հետագայում տպագրվել են *Le Musnon* հանդեսում, տե՛ս **Shirinian A.**, *Le nuove accessioni manoscritte armene del Pontificio Collegio Armeno di Roma: un primo report, "Le Musnon" 116, 1-2 (2003)*, էջ 71-90.

² Հանդէս Ամսօրեայ, սյուն 71 (1957), 160-177, 282-291, 420-439, 537-558; 72 (1958), սյուն 49-82.

³ **Ակինեան Ն.**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Հռոմի հայոց հիւրանոցի ի Ս. Վլաս եւ Քահ. Լեոնեան հայ վարժարանի **Akinean N.**, *Katalog der Armenischen Handschriften des Armenischen Hospizes zum Hl. Blasius in Rom und des Pont. Leoniano Collegio Armeno, Roma, Wien 1961* (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց հրատարակեալ ի Մխիթարեան Միաբանութեն ի Վիեննա, 11):

կողմից արձանագրված ընդամենը 113 ձեռագիր, որոնց գոյությունը մենք կարողացանք հավաստել գրադարանի դասակարգման մեր աշխատանքների ընթացքում: Ավելին, Ն. Ակինյանի նկարագրած այս ձեռագրերից բացի, դասակարգման առիթով հայտնաբերվեց ևս 62 գրչագիր, որոնց թիվը կարող է նաև աճել հետագա մեր աշխատանքները կատարելիս: Այդ գրչագիրների մի մասը պահպանված էր Ակինյանի նկարագրած ձեռագրերի մոտ, իսկ մյուսները գտնվեցին տպագրված գրքերի կամ արխիվային փաստաթղթերի մեջ:

Նոր հայտնաբերված գրչագիրների մեծամասնությունը բովանդակության առումով հիմնականում ծիսական ու բարեպաշտական բնույթի է, իսկ մնացածների նյութերն են՝ եկեղեցական պատմություն, հայ և հույն եկեղեցական հայրերի գրվածքներ, փիլիսոփայություն, աստվածաբանություն և այլն: Այդ մատյանները հիմնականում նոր ժամանակների են (XIX-XX դդ.), բայց գոյություն ունի նաև ավելի հին ձեռագրերի մի փոքր քանակ, որոնցից երկուսը (XV դ., մանրանկարներով) են ներկայացրեցի Վյուրցբուրգում: Ամփոփելով դրանց նկարագրությունը՝ ասենք, որ մեկը Մաշտոց է, իսկ մյուսը՝ Ավետարան, համապատասխանորեն՝ 1432 և 1463 թվականների: Ավելի հինը՝ Մաշտոցը, ընդօրինակել է գրիչ Կարապետը Արճեշում (Վանա լճից հյուսիս), իսկ Ավետարանը գրվել է գրիչ Ստեփանոսի կողմից Եղբրդուտի վանքում (Մուշ քաղաքի մոտ): Այս ձեռագրերի հիշատակարանները և մանրանկարները մասնավոր արժեք ունեն հայկական մանրանկարչության պատմության համար: Մաշտոցը նկարագարող է XV դարում Վասպուրականի հայտնի նկարիչ Մինասը: Հնարավոր դարձավ պարզել, որ այս կորած համարվող Մաշտոցը եղել է Մինաս Ծաղկողի առաջին աշխատանքը⁴, որից հետո նա շարունակել է իր բեղուն գործունեությունը հետագա 50 տարիների ընթացքում: Եղբրդուտի Ավետարանի հիշատակարանում ծաղկողի անունը չի հիշվում, և նրա ճոխ մանրանկարների հեղինակը մնում է անհայտ: Այս մանրանկարները զետեղված են հիմնականում գրքի սկզբում ու կազմում են Քրիստոսի կյանքին նվիրված 22 ամբողջ էջով նկարների մի շարք:

Ինչպես տեսանք, այս երկու ձեռագրերից մեկը ստեղծվել է Վասպուրականում, իսկ մյուսը՝ Տարոնում: Ճանապարհը, որով անցել են այդ մատյանները մինչև Հռոմի հայ վարժարան հասնելը, դեռ մնում է պարզելու, բայց նրանց միջև կա կապող օղակ. XIX դարի վերջին այս երկու ձեռագրերը տեսել է հայագետ վարդապետ Ղևոնդ Փիրղալեմյանը, որ նրանց հիշատակարանները արտագրել է իր «Նոտարք Հայոց» գրքի մեջ⁵: Մաշտոցը նա տեսել է Բաղեշ քաղաքի Գոմք վանքում⁶, իսկ Ավետարանը՝ Վան քաղաքի Արարքի վանքի Ս. Աստուածածին եկեղեցում: Երկուսի վրա Փիրղալեմյանը թողել է իր ստորագրությունը՝ նշելով թվականը և տեղը: Փիրղալեմյանի այս վկայությունը հիմք դարձավ, որ նրանց գոյության մասին լուրը անցնի հայ գրականության մեջ⁷: Մեծ եղեռնից հետո այս երկու ձեռագրերը,

⁴ Vardanyan E., *Catalogue des manuscrits du peintre Minas (XV^e s.), "Revue des études Arméniennes", n. s. 27 (1998-2000), էջ 359-378. տե՛ս էջ 360-361:*

⁵ Ղևոնդ Փիրղալեմյան, Նոտարք Հայոց, Կ. Պոլիս, 1883:

⁶ Անդ, N 102, էջ 100-101:

⁷ Խաչիկյան Լ. Ս., ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ի. Ե., 1955, էջ 424-425 (N 455), II, Ե., 1958, էջ 193-194 (N 236). Փիրղալեմյանի շնորհիվ է նաև, որ այս ձեռագրերի

ինչպես նաև Փիրղալեմյանի հայ վանքերում ճանապարհորդությունների ժամանակ նկարագրած շատ այլ գրչագիրները, համարվեցին կորած⁸:

Հիմա մենք հեռանանք Փիրղալեմյանի անձից, որպեսզի շուտով նորից վերադառնանք նրան Լևոնյան վարժարանի երկու այլ ձեռագրերի ներկայացման վերջում: Շարունակելով ներկայացնել ամենահին ձեռագրերը նորահայտ խմբի մեջ՝ սեղմ ձևով կնկարագրեն հիմա երկու մատյաններ, որոնք նույնպես ուշագրավ են հայկական մանրանկարչության պատմության և հայ ձեռագիրների հետազոտությունների ասպարեզում: Մեկը 1580 թվականի Շարակնոցն է, իսկ մյուսը՝ 1680 թվականի Ավետարանը: Երկու այս գրչագիրները փոքր չափսի են և համարյա թե նույն մեծության (մոտավորապես 11x9 սմ). շատ հարուստ նկարազարդված են և, ինչպես բնորոշ է հայկական ձեռագրերի հիշատակարաններին, տալիս են բազմաթիվ տեղեկություններ ոչ միայն գույն գրչագրերի, այլ նաև դրանց ստեղծման պատմական դարաշրջանի մասին:

ա) Սկսենք 1580 թ. (ՌԻԹ) Շարակնոցից. ձեռագիրը կաշեկազմ է, նյութը՝ թուղթ, ունի 394 թերթ և զարդարված է բազմագույն մանրանկարներով (կարմիր, նարնջագույն, մանուշակագույն, կապույտ, կանաչ), ոսկու օգտագործումով: Կիսախորանից և լուսանցազարդերից բացի, կան նաև թեմատիկ 4 նկարներ՝ ամբողջական էջով, որոնք հերթականությամբ պատկերում են Ավետումն Յովակիմայ և Աննայի, Յուդաբեր կանայք առ գերեզմանին, Հոգեգալուստ և Տեսիլ Եզեկիելի: Ձեռագրի գրիչ Մարգար քահանայի երկար հիշատակարանից (թղ. 389r-390v) ստանում ենք տարբեր տեղեկություններ: Մարգարը հաստատում է, որ ձեռագիրը արտագրել է Ֆոնավսում (Մարաշից հյուսիս և արևելք գտնվող գյուղ), Մուրբ Կարապետ վանքում, Սսի կիլիկյան ընտիր օրինակից, որը պատկանում էր երաժշտության հայտնի վարժապետ Գրիգոր Խուլին⁹, Խաչատուր կաթողիկոսի ժամանակ¹⁰: Իր ընտանիքի անդամների համար ընթերցողի աղոթքները խնդրելուց հետո Մարգարը խոսքը ավարտում է իր ուսուցիչ Մարտիրոս Խիզանցու գովերգով: Մարտիրոս Խիզանցին հիշված է իր աշակերտի բառերով՝ որպես «քաջ նկարող և պարծանք Հայաստանեայց աշխարհին»: Մարտիրոսի հետ հիշվում է նաև նրա հայրը՝ Մարգիսը, որ «գտգետս և զանիմաստս ուսոյց և ի յայս չափ արուեստս հասոյց»: Մարգարը աղոթում է Աստծուն, որ իր ուսուցչին «երկայն ատուրբք պահէ եւ, յետ աստեացս ելանելոյ, զիւր հոգին եւ զիւր ծնաւդացն հոգին ի վերինն Եդուսաղէմ դասեսցէ. Ամէն»:

Մարտիրոս Խիզանցին հայտնի գրիչ և նկարող է, որ ստեղծագործել է XVI դարում¹¹ (մահացել է 1609 թվականին): Մատենադարանում պահպանվում են նրա

հիշատակարանների անձնանունները մտել են Հ. Աճառյանի Հայոց անձնանունների բառարան, I-V, Ե., 1942-1962:

⁸ **Խաչիկյան Լ.**, նշվ. աշխ., I, էջ LIX, Փիրղալեմյանի տեսած ձեռագրերի մի զգալի մասն այժմ գոյություն չունի:

⁹ Գրիգոր Խուլը ապրել է Լևոն Բ թագավորի ժամանակ (1187-1219), հմմտ. **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, I, Ե., 1942, էջ 571:

¹⁰ Խաչատուր II Ուլնեցի, կաթողիկոս Սսի, 1560-1584, տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, III, Ե., 1944, էջ 485-486:

¹¹ Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ. Մատենագիտություն. IX-XIX դդ., Գահիրե, 1998, էջ 384-386, թ. 225:

5 ձեռագրերը¹²: Մարտիրոսը եղել է մանրանկարիչների և գրիչների ընտանիքից (նրա հայրը՝ Մարգիսը, որը նաև հիշված է մեր հիշատակարանում, մանրանկարիչ էր: Մանրանկարիչներ էին նաև նրա որդի Գրիգորիսը և եղբայր Մարգիսը): Հիշատակարաններում ինքը՝ վարպետը, տեղեկացնում է, որ ձեռագրերի ստեղծմանը մասնակցել են ինչպես իր ընտանիքի անդամները, այնպես էլ աշակերտները: Մարգարը, մեր այս գրիչը, նրա աշակերտներից մեկն է և իր կողմից գրված հիշատակարանում վկայում է իր ուսուցչի մեծ համբավի մասին: Այսպիսով, այս Շարակնոցը պատկանում է Մարտիրոս Խիզանցու դպրոցին: Այս գրչագրի հայտնաբերումով մանրանկարչական այդ դպրոցի աշխատանքների թիվը ավելանում է մինչ այժմ անհայտ մի գեղեցիկ օրինակով ևս:

բ) Երկրորդ և վերջին ձեռագիրը, որ ներկայացվում է առաջին անգամ, Ավետարան է, նյութը՝ մագաղաթ, ժամանակը՝ ՌՃԻԹ (1680) թ., կազմը մետաղյա է: Կազմի վերի երեսը պատկերացնում է խաչելությունը (Քրիստոսի խաչը՝ կենտրոնում, ոսկեգոծ է), իսկ ստորինը՝ հարությունը: Ձեռագիրն ընդգրկում էր Քրիստոսի կյանքին նվիրված մանրանկարների ավելի հարուստ շարք, որը մասամբ կորսվել է. մնացել է միայն 5 նկար, որոնցից մի քանիսը՝ առանձին թերթերով: Ներկայացված թեմաները հետևյալն են. Այլակերպությունը, Ոսնկվա, Հուդայի համբույրը, Հիսուս՝ կրող իր խաչը, և Ավերումն դժոխաց: Կան նաև Եվսեբիոսի համաբարբառների միայն 6 տախտակներ և 3 ավետարանիչների դիմանկարներ (բացակայում է Ս. Հովհաննեսը): Ձեռագրի նկարազարդումը լրացվում է գեղեցիկ կիսախորաններով և բազմաթիվ լուսանցազարդերով. այս բոլոր նկարազարդումները բազմագույն են՝ ոսկու լայն օգտագործումով: Ավետարանի տեքստի վերջում (թղ. 258v-260v) գետեղված երկար հիշատակարանը սկսվում է Ս. Երրորդության աղոթքով, 4 ավետարանիչների հիշատակումով և 4 թվի հետ կապված նշանների մի շարքով¹³: Այնուհետև սկսվում է մատյանի մասին պատմությունը: Հիշատակվում է ձեռագրի ստացող «հաւատարիմ եւ հեզահոգի տէր Յովանէսն...որ ետ զսա ոսկով եւ զանագան եւ էրանգերանգ գոյնով զարդարել յիշա-տակ բարի հոգոյ իւրոյ եւ ծնողացն»: Որպես ձեռագրի ծաղկող՝ հիշատակվում է Սահակ Վանեցին: Ինչպես Շարակնոցի դեպքում, այս գրչագրի հիշատակարանում գտնված տեղեկությունները ևս հյուսվում են հայ ձեռագրերի պատմության տվյալների հետ: Սահակ Վանեցին հայտնի վարպետ էր, մատյանների ծաղկող և կազմող¹⁴: Նա ստեղծագործել է Բաղեշում, եղել է տեղի դպրոցի առաջնորդը: Նրա ձեռագրերից 9-ը պահպանվում են Մատենադարանում և ստեղծվել են 1662-1675 թվականներին¹⁵, իսկ այլ երկուսը

¹² Նույն տեղում, N 5576 (Աւետարան), N 1378 (Հովհան Ոսկեբերան), N 6093 (Աւետարան), N 10676 (Յայսմաւորք), N 8934 (Աւետարան):

¹³ Հմմտ. Hannick C., *Bibelexege in Armenischen Handschriftenkolophonen, Armenia and the Bible. Papers Presented to the International Symposium held at Heidelberg, July 16-19, 1990, ed. by C. Burchard, Atlanta 1993 (University of Pennsylvania, Armenian Texts and Studies), pp. 79-86. R. W. Thomson, Number Symbolism and Patristic Exegesis in Some Early Armenian Writers*, Հանդես Ամսօրեայ 90 (1976), պլն 117-138, տե՛ս 120-124:

¹⁴ **Գեորգեան Ա.**, Հայ մանրանկարիչներ. Մատենագիտութիւն. IX-XIX դդ., նշվ. աշխ., էջ 634-638, N 393:

¹⁵ Նույն տեղում, N 5464 (Խորհրդատետր), N 2639 (Ժողովածու), N 8975 (Աւետարան), N 6094 (Աւետարան), N 5640 (Աւետարան), N 5638 (Աւետարան), N 5821 (Գրիգոր Տաթևացի, Քարոզագիրք), N 7080 (Աւետարան), N 7323 (Խորհրդատետր):

պահպանվում են Երուսաղեմում¹⁶: Այսպիսով, դրանց բոլորին ավելանում է Հռոմի Լևոնյան վարժարանի մի նորահայտ ձեռագիր ևս: Որպես ձեռագրի ստեղծման վայր՝ հիշվում է Ս. Բարդուղիմեոսի վանքը: Շատ հավա-նական է, որ սա Վանա լճից հարավ-արևելք գտնվող Աղբակի վանքն է՝ հիմնադրված այնտեղ, որտեղ, ավանդության համաձայն, Սուրբ Առաքյալը նահա-տակվեց¹⁷:

Ինչ վերաբերում է մինչ Լևոնյան վարժարան հասնելը գրչագրի գտնվելու վայրին, պետք է ասել, որ ինչպես այն երկու ձեռագրերը, որոնց մասին խոսեցի սկզբում, այս գրչագիրն էլ Ավետարանի տեքստի վերջում ունի Ղևոնդ Փիրղալեմյանի մանուշակագույն թանաքով գրված մակագրությունը: Այս մակագրությունը ունի թվական և վարդապետի անվան սկզբնատառը. 1882 սեպ. 18 ընդօրինակեցի. Ղ. Վ. Տ. (=Ղևոնդ Վարդապետ Տոսպեցի), բայց ի տարբերություն մյուսների՝ հիշատակված չէ վայրը, որտեղ հոգեվորականը տեսել է մատյանը: Ինչպես հայտնի է, «Նօտարք Հայոց» վերնագրով գրքում տպագրված է Ղևոնդ Փիրղալեմյանի ընդօրինակած հիշատակարանների միայն մի մասը: Այս գիրքը պարունակում է 1393 թվականից մինչև 1497 թվականի հիշատակարանները: Մեր կողմից արձանագրվածը, որը մոտ երկու դար ավելի ուշ է, ընդգրկված չէ այնտեղ: Վարդապետի արտագրած մնացած հիշատակարանները մնում են գրչագրական ձևով Մատենադարանում, ուր կազմում են N 6273 և N 4515 ձեռագրերը: Այս հետազոտության հաջորդ քայլը կլինի Փիրղալեմյանի թղթերի մեջ գտնել խնդրո առարկա հիշատակարանի՝ Փիրղալեմյանի կատարած ընդօրինակությունը, որտեղ, սովորության համաձայն, նա պետք է նշած լինի նաև ձեռագրի պահպանման տեղը, և այդ կլինի այն ճանապարհորդության մեկնակետը, որ մեր ձեռագիրը կատարել է մինչ Հռոմ հասնելը: Ճանապարհորդություն, որի երթուղին շատ հատվածներում դեռ մնում է վերականգնելի¹⁸:

ԱՆՆԱ ՇԻՐԻՆՅԱՆ

(Բոլոնիայի համալսարան)

¹⁶ Այն մեկին, որ նշում է Ա. Գևորգյանը (Երուս. ձեռ. 2351), պետք է ավելացնել ձեռ. 3432, տե՛ս Ն. Պողարեան, Մայր Ցուցակ Ձեռագրաց Ս. Յակոբեանց, հ. Ժ, Երուսաղեմ, 1990, էջ 358-361:

¹⁷ Աղբակի (Հաղբաքի) վանքի մասին տե՛ս *P. Cuneo, Architettura armena, I, Roma 1988, էջ 526-527, N 315.*

¹⁸ Գիտաժողովից հետո Գևորգ Տեր-Վարդանյանի շնորհիվ հնարավորություն ունեցա բացահայտելու Փիրղալեմյանի գրչագրական ցուցակի մեջ (Մատ. ձեռ. 4515) մեր խընդրած տվյալը (էջ 535-536, թ. 661): Փիրղալեմյանը արձանագրել է, որ այս «արծաթապատ և մագաղաթեայ Աւետարանը գտնվում էր «ի Վան, յԱրարուց եկեղեցի»»: Սա նույն վանքն է, որտեղ վարդապետը տեսել էր մյուս՝ ավելի հին (1463թ.) ավետարանը, որի մասին խոսվեց սկզբում: Թվականն էլ նույն է. 1882 սեպտ. 18. այսպիսով, այս երկու ավետարանները Փիրղալեմյանը տեսել է Արարքի վանքի նույն այցելության ընթացքում: